ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔ-ԼՕ-2021/73, 06.09.2021թ.

Բողոք բերող անձ՝ «Ռոստորգ» ՍՊԸ

Պատվիրատու՝ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի համայնքապետարան

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ՀՀԿՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-21/06» գնանշման հարցում

Գնման առարկան՝ ֆոտովոլտային կայանքների ձեռքբերում

Բողոքի պահանջը՝ պարտավորեցնել Կոտույքի մարզի Գեղաշենի համայնքապետարանի կարիքների համար «Գեղաշեն համույնքում ֆոտովոլտային կայանքների» տեղադրման աշխատանքների» ձեռքբերման համար հայտարարված «ՀՀԿՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-21/06» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում «ՀՀԿՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-21/06» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ. ՄԿՐՏՉՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ **հղումով**.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման

ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

28 օգոստոս 2021 թ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

Բողոքը ներկայացնող՝ **«Ռոստորգ» ՍՊԸ**

Հասցե՝ ՀՀ ք.Գյումրի, Կամոյի փ/.2/71ա/ 60

Հեռ՝ 055310312

Էլ. հասցե՝ info@smartbid.am

ssahradyan@mail.ru

Պատվիրատու՝ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի համայնքապետարան

Հասցե՝ գ. Գեղաշեն, 1փ. 30 շենք համայնքապետարան

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

Կոտայքի մարզի Գեղաշենի համայնքապետարանի կարիքների համար «Գեղաշեն համայնքում ֆոտովոլտային կայանքների» տեղադրման աշխատանքների» ձեռք բերման համար հայտարարված **«ՀՀԿՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-21/06»** ծածկագրով գնանշման հարցման մրցույթ

«Ռոստորգ» ՍՊԸ հհ՝2050122218471001

Բողոք

ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի համայնքապետարանի կողմից 16 օգոստոս 2021թ հայտարարված **«ՀՀԿՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-21/06»** ծածկագրով մրցույթի հրավերի հավելված 3-ում՝ վճարման ժամանակցույցից պարզ է դառնում, որ «Գեղաշեն համայնքում ֆոտովոլտային կայանքների տեղադրման աշխատանքների» կատարման ընդհանուր գումարի 50 տոկոսը տրամադրում է համայնքապետարանը, իսկ մյուս 50 տոկոսը առկա չէ բյուջեում և տրամադրվում է ՀՀ Կառավարության կողմից աուբվենցիոն ծրագրով: Վերը նշված հավելվածում նշված է նաև, որ **Կառավարության մասնաբաժինը վճարվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի** ուժի մեջ մտնելու օրվանից հաշված:

Ըստ Գնումների մասին օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը, սույն օրենքով սահմանված կարգով կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում:

Այս համադրություններից հետևում է, որ «ՀՀԿՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-21/06 ծածկագրով գնման գործընթացը իրականացվում է ՀՀ գնումների մասին օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա:

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ մասը, այն է՝ եթե ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով, տեղի է ունենալու բանակցություններ:

Հիմք ընդունելով Գեղաշենի համայնքապետարանի կողմից հայտարարված ՀՀԿՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-21/06 ծածկագրով գնահատող հանձնաժողովի 23 օգոստոս 2021 թվականի նիստի արձանագրությունը (որը հրապարակվել է 25 օգոստոսի 2021թ,

խախտվել է ՀՀ գնումների մասին օրենքի 34 -րդ հոդվածի 9-րդ կետը, այն է Հայտերի գնահատման նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում), որում ԷԿովիլ ՍՊԸ-ն հայտարարվում է հաղթող մասնակից:

Հաշվի առնելով վերոգրյալները, այն է

- Գների նվազեցման բանակցություններ չի վարվել
- Արձանագրությունը ժամկետում չի հրապարակվել

Խնդրում ենք պարտավորեցնել Կոտայքի մարզի Գեղաշենի համայնքապետարանի կարիքների համար «Գեղաշեն համայնքում ֆոտովոլտային կայանքների» տեղադրման աշխատանքների» ձեռք բերման համար հայտարարված «ՀՀԿՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-21/06» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում «ՀՀԿՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-21/06» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

Առդիր 2 էջ

«Ռոստորգ» ՍՊԸ տնօրեն Ս.Սահակյան